№ 96 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 25 **1890** ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 25 № 96

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իմաստակութիւնը ազատամտութիւն չէ. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսկաստան. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՏԵՂԵԿԱՏՈՒՅՑ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Համքարական միութիւններ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏԱՄՏՈՒԹԻՒՆ ՉԷ

—

Մեր երիտասարդութեան թերուսութեան պատճառով յաճախ պատահում է տեսնել մանաւանդ գաւառներում իմաստակներին, որոնք սակայն իրանք իրանց ազատամիտ են անուանում: Թէ ինչի մեր երիտասարդութիւնը անկարող է հանդիսանում իրանից սպասված գործունէութիւնն ու արդիւնքը ցոյց տալ, թէ ինչի շատ դէպքերում և տեղերում հասարակութիւնը սառն կերպով է վերաբերվում դէպի երիտասարդների ձեռնարկութիւնը,—դրա պատճառը պէտք է համարել նոյն իմաստակ անձանց:

Ամենից առաջ կեղծ ազատամիտը ներկայանում է մեր աչքերին իբրև բոլորովին անփորձ անձնաւորութիւն, որի գլուխը լցված է երևակայական ցնորքներով ու խաբուսիկ պատկերներով: Նա մեծ գաղափար ունի իր վրա, նա հաւատացած է թէ ինքը ընդունակ և կարող է յեղափոխում հասարակական կեանքը: Իր հասակակիցների շրջանում նա դնում և լուծում է այնպիսի հարցեր, որոնց մասին հասկացողութիւն չունի: Կեղծ ազատամիտը միաժամանակ և նշանաւոր կրիտիկոս է. նա քննադատում է և ռուս գրողին, որի մի-երկու գիրքը հազիւ է կարդացել, և համաշխարհային հանճարներին և հայոց գրողներին.... Նա շատ թեթև կերպով վճռում է ամեն ինչ և ինքնաբաւական ժպիտով բարձրացնում է իր գլուխը իր շրջանում: Խոհեմութիւն, լրջութիւն, առողջ դատողութիւն բառերը՝ աւելորդ և ձանձրալի ծանրութիւն են նրա համար: Բայց կեղծ ազատամիտների ամենամեծ թշնամին դիսցիպլինան է, և անհնարին է լինում համոզել դրանց թէ առանց դիսցիպլինայի ոչ մի գործ առաջ գնալ չէ կարող: Կեղծ ազատամիտը ծառայելով մի տեղում, իրաւունք է համարում իրան աջ և ձախ դատապարտել հիմնարկութեան միջի կարգերը և կառավարչի անձնաւորութիւնը, և իւրաքանչիւր անգամ երբ անուշադիր է թողնում, մանաւանդ երբ կոպտութեամբ է վերաբերվում այս և այն անօրէնութիւններին, արժանանում է իւրայինների գովեստներին.... Հնազանդութիւն բառը նա ստորութիւն է համարում իր համար և հէնց հնազանդողներին էլ համարում է շողոքորթ, հացկատակ:

Կեղծ ազատամիտը պախարակում է ուրիշների նոյն իսկ ակամայից առաջացած ամենաանշան զանցառութիւնը, իսկ ինքը բորբոքվում, զայրանում է երբ իր անխոհեմութեամբ, անճշդութեամբ ահագին վնաս է հասցնում իրան յանձնված այս կամ այն գործին: Ամեն օր ճառեր է խօսում արդարութեան և ազնիւութեան մասին, բայց ամեն կերպ ջանք է դործ դնում անուանարկելու իր ընկերին, պախարակելու և ի կորուստ դատապարտելու: Պատահում են և այնպիսի անհատներ, որոնք ճոճռան ֆիրաղներով քարոզում են թէ հարկաւոր է ժողովրդի մէջ մտնել և նրա կեանքը ուսումնասիրել, բայց ղղվում են գռեհիկ ամբոխի մէջ մտնել և նրանց յիմար խօսքերը լսել.... Բողոքում են ժողովրդի հարստահարիչների դէմ, իրանք էլ խօսքով ղղուանք են յայտնում լրագրութեան մէջ պախարակված անկոչ «արլակատների», չահախնդիր զրագիրների, միրզաների դէմ, բայց և այնպէս պատահած ժամանակ իրանք ևս ճարպկաբար օգուտ են քաղում պարզամիտ մարդու անգիտութիւնից:

Այդպիսիներից կան և ուսուցիչներ և վայ այն խմբին՝ որի մէջ այդպիսիները գերակշռող թիւ են կազմում:

Խմաստակ ուսուցիչը իր գործածի հետևանքի մասին երկար մտածելու սովորութիւն չունի, իսկ լուել, երբ այդ պահանջում է խոհեմութիւնը, նա անաղնութիւն է համարում: Եւ ահա նոյն իսկ հրապարակական հարցաքննութեան միջոցին, աշակերտների, աշակերտուհիների և հանդիսականների ներկայութեամբ սկսում են միմեանց պախարակել, հայհոյել, առանց մտածել կամենալու թէ ինչ օրինակ պէտք է առնէ այդպիսի վարմունքից մատաղ սերունդը և թէ այդպիսով ընկնում է հիմնարկութեան արժէքը ժողովրդի աչքում և մի համակրելի դասակարգի պատիւը արատաւորվում է.... Հապա ինչ է քաշում խումբը ամբողջ տարվայ ընթացքում այդ ինքնահաճ անձնաւորութիւնների ձեռքից: Փորձեցէք, ինչպէս ասում են, խելքներդ նրանց խելքի հետ դնել և ահա Աստուծու օրը կըռիւ կունենաք: Մէկը ընկերաբար մի խօսք է ասել դիցուք մեր ազատամիտ պարոնին և ահա սա իր անխոհեմ վարմունքով կայծից հրդեհ է գոյացնում, ճղռաց, ըղռաց, ժամերով ջուր ծեծել.... Թատրոն պէտք է ներկայացնէք, բայց մեր ազատամտին առաջին դերը չէք տուել (թէև գուցէ նա երկրորդական դերը ևս հազիւ թէ կարող է կատարել) և ահա քիթ ու պռունգ, հրաժարումն, երբեմն և ուրիշներին համոզում են հրաժարվելու: Թատրոնի համար դիցուք հրաւիրված են տիկիններ և օրիորդներ, որոնց մասնակցութիւնն իսկ զաւառական քաղաքներում փոքր զոհաբերութիւն չէ. անհրաժեշտ է, ի հարկէ, որքան հնար է ղղոյշ լինել թէ վարմունքի և թէ խօսակցութեան մէջ, բայց մեր ազատամիտը առանց երկար ու խոր մտածելու անզգոյշ խօսքով, անտակտ վարմունքով զզուեցնում է թատրոնասիրուհիներին և թատրոնական գործը վնասվում է: Նշանակված է թատրոնական կրկնութեան ժողով որոշ ժամին. մեր ազատամիտը, որ ատում է ճշդութիւնն ու դիսցիպլինան, անպատճառ չի գայ նշանակեալ ժամին, այլ մի—երկու ժամ ուշ և եթէ նրան նկատէք թէ ամբողջ խումբը պարտաւոր չէ նրան սպասել, այն ժամանակ պատրաստ եղէք նրա մարգարտաշար կոպտութիւնները լսել: Եթէ աշխատանքի բաժանութեան սկզբունքի հիման վրա՝ մեր պարոնին որ և է գործ յանձնէք թատրոնում կատարելու, նա երբէք չի կատարի: Նոյն իսկ դերի ժամանակ իր հանձնելու շորն ևս նա չի ձեռք բերի, այլ վարագոյրը բացվելու րոպէին թատրոն գալով կը յայտնի, որ շոր չէ գտել, չէ էլ որոնել....

Փորձեցէք այդպիսիներին հաշիւ պահելը յանձնել և մի քանի մարդով ամբողջ ամիս գլուխ կոտրելով անկարող կը լինէք մի բան հասկանալ: Որ և է ժողով պատահելիս՝ կեղծ ազատամիտը համբերութիւն չունի ուրիշների կարծիքն ևս լսելու, այլ մի գլուխ ընդհատում է ուրիշներին. խօսում, պնդում է այնպիսի անհեթեթ ձևով, որ նոյն իսկ իւրայինների ծիծաղն է շարժում: Նա վեր է առնում մի պարբերութիւն, մի բառ և անվերջ խօսում է, ջուր է ծեծում: Փոքր ի շատ խելքը գլուխը մարդու համար և ծանր, և զզուելի, և ծիծաղելի է դառնում այդպիսի բառերի ժայթքոցը լսել: Եթէ կեղծ ազատամիտը մի անգամ պնդել է, որ մածունը սև է, ապարդիւն փորձ մի գործէք նրան համոզելու, որ սպիտակ է, որովհետև ոչքան էլ սրտի խորքում համոզված լինի ձեր ասածի ճշմարտութեան մասին, այնու ամենայնիւ, իր համար անպատուութիւն կը համարէ զիջանելը: Դա նրա բառարանի մէջ նշանակում է հաստատամիտ, չանդրդուելի, բարոյական ամուր հիմունքներ ունեցող անձնաւորութիւն: Ինչպէս ասացինք, ամեն ինչ ինքնաբաւական է նրա համար: Ինքը ամենագիտակ է, ինքը ամենագէտ է, ինքը ամենակարող է: Ինքը ամենայն բանի գիտակ է, ինքը ամենայն բանի գիտակ է, ինքը ամենայն բանի գիտակ

տակամութիւն: Շատ զգոյշ պէտք է լինել աղատամիտ պարոնի հետ վիճելիս, որովհետև նրա սովորութիւնն է բուն հարցը թողած կպչել ձեր անձնաւորութեանը: Եթէ ցանկանում էք խոր կերպով վիրաւորել կեղծ աղատամտին՝ նրա ներկայութեամբ գովեցէք նրա մի ընկերին, մի ուրիշին, որովհետև նա համոզված է, թէ գովեստն ու պատիւը միայն ինքն իրաւունք ունի ստանալու: Կեղծ աղատամտի համար չը կայ մի հարց, որին նա իր հակացողութիւնից բարձր համարէր և ամենաէական հարցերն անգամ այնպէս ճիշդ է լուծում, ինչպէս ես և դուք, ընթերցող, մի թաս թէյ ենք խմում: Նա առարկութիւններ չէ սիրում, նա կարծէք չէ լսում, և այդ քաջութիւն է համարում....

***

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Օգոստոսի 13-ին

Զմեռվայ ամբողջ ընթացքում՝ Երևանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը ուսուցչական խմբի հետ վատ վարվելուց յետոյ, այսօր հասաւ ծայրահեղութեան՝ արձակելով այժմեան խմբի մի քանի լաւ ոյժերին: Հոգաբարձութիւնը նրանց տեղ հրաւիրել է համալսարանական ու ճեմարանական անձանց: Ի հարկէ, շատ համակրելի է հոգաբարձութեան այդպիսի մի քայլը, բայց ցաւալին այն է, որ այդ վարագոյրով նա իր կրքի զոհ դարձրեց արժանաւոր ուսուցիչներին: Այսօր այն ուսուցիչները, որոնք 10—25—34 տարի ուսուցչութիւն են արել, քրտինք են թափել իրանց խնամքին յանձնված հայ մանկանը տալ այնքան պաշար, որ նա ապագայում իր ժողովրդին ու մարդկութեանը պիտանի անդամ դառնայ, որոնք օրինակելի կարող են լինել մեր բոլոր դպրոցների ուսուցիչների համար, և որոնք իրանց այդքան տարվայ ուսուցչական դժան պաշտօնը վարելուց յետոյ, պիտի վարձատրվին, զոհ են դառնում կրքի և ամբողջ ընտանիքով մնում են առանց հացի: Հայերիս բոլոր հասարակական գործիչների ճակատագիրն է այդ: Քանի կարելի է ծծում են նրա հիւթը և օգտվում նրանից. հէնց որ նա հանում է այն հասակին, երբ նա պիտի վայելէ անցեալ աշխատութեան պտուղները, նրան՝ ինչպէս մի անպիտան արարածին դուրս են շպրտում և մատնում քաղցածութեան ճանկը: Այդպէս էլ արեց մեր հոգաբարձութիւնը: Մենք չենք ասում, որ մեր դպրոցները չինեն անկելանոցներ և ձրի փող տան սրան ու նրան ուտելու. ոչ, այդ ոչ մէկս չի ցանկանայ, բայց երբ որ մի անձնաւորութիւն աւելի քան պիտանի է, աշխատաւոր ու տոկուն է, նրա տուած արդիւնքը հասարակութեան աչքի առաջն է,—անխղճութիւն է բոլորովին վռնդել նրան և այն էլ օգոստոս ամսին, երբ բոլոր դպրոցներում տեղերը արդէն բռնված են: Ինչ անի այժմ խեղճ ուսուցիչը, մանաւանդ նա, որը ծանրաբեռնված է ահագին ընտանիքով:

Մենք միշտ գուռալ գիտենք, թէ մեր դպրոցները պէտք է ունենան ուսումնական հոգաբարձուներ, բայց բանից երևում է, որ նրանց ևսը ու կիրքը այն աստիճան է, որ ոչնչացնում է նոյն իսկ խիղճը, այն ինչ հասարակ դասակարգը՝ աւելի խղճմտաւոր, աւելի անկողմնապահ և սառն է դատում:

Թեմական դպրոցի ուսուցչական խումբը այսօր հալածվում է նրա համար, որ նա՝ երբ հոգաբարձութիւնը սկսեց խիստ կօնտրոլ ունենալ դպրոցի ուսումնական մասի վրա, բողոքեց դրա դէմ. նա չուզեց, որ իր պատիւը և իրաւունքը ոտքի տակ տրվեն, որ նրա մարդկային և ուսուցչական իրաւունքները խլի հոգաբարձութիւնը (ինչպէս այդ անում են մեր գիւղերում): Այն ժամանակ երբ մեր ուսումնական հոգաբարձութիւնը պէտք է ձեռք մեկնէր մի այդպիսի խմբին, որը իր պատիւը ուզում է բարձր պահել,—սկսեց հալածել: Հոգաբարձութիւնը, պէտք է ասած, ինքն էլ փոշմանել է իր այդ արածի վրա. բայց ցաւալին այն է, որ յամառել է և չէ ուզում յետ կենալ իր ընթացքից: Ուսուցչական ու հոգաբարձական իրաւունքների հարցը գնալով այնքան մեծ կերպարանք ստացաւ, որ այստեղ մշակվեց այդ բանի մասին մի կանոնադրութիւն, որը հաւանութիւն գտաւ Կաթուղիկոսի կողմից ու տպագրվելով պիտի հրատարակվէր բոլոր թեմ. դպրոցների համար, բայց դարձեալ մի քանի պատճառներով յետաձգվեց:

Չը մոռանալով, ի հարկէ, որ մեր բոլոր դպրոցներում կարևոր են համալսարանական դասատուներ, չը պէտք է մոռացած նաև մեր ոչ-համալսարանականների արած ծառայութիւնները: Ո՞վ չը գիտէ, որ մեր բոլոր դպրոցներում յոգուտ դպրոցի ներկայացում տուողները, դասախօսութիւն կարդացողները, գրադարան հիմնողները, երեկոյթներ կազմողները և այլն և այլն մեր ոչ-համալսարանական ուսուցիչներն են, այն ինչ համալսարանականը ոչ թէ չէ անում այդ, նոյն իսկ արժանի էլ չէ համարում գնալ դասառները, իսկ եթէ անում էլ է, միայն ռոճիկի շատութեան պատճառով և այն էլ պաշտօնապէս միայն: Նա ստորութիւն է համարում դեր կատարելը, տոմսակ ծախելը, փող հաւաքելը և այլն, այն ինչ հասարակ ուսուցիչը միջից կէս է լինում, մշակի պէս աշխատում է. նա և դասեր է տալիս, և դերեր է սովորում, դեր կատարում, և քեմ է շինում, և տոմսակ է ծախում, և ձրի դասեր է վերցնում բացակայ ընկերի փոխարէն, աշակերտների հետ զբօսնելու է գնում, մանկական ժողովներ է անում, տնէ տուն մտնում, կօպէկներ է հաւաքում և այլն և այլն. և այդ բոլորը դպրոցի, աշակերտների և հասարակութեան օգտին: Բաւական է յիշել, որ մի քանի տարի առաջ Ալէքսանդրօպոլի ուսուցչական խումբը 10 տարուց աւելի կառավարվել է առանց տեսչի, կօպէկանոց տուրքեր սահմանելով՝ աղքատ աշակերտներին գրքեր և ուսումնական պիտոյքներ է հոգացել, այդ փողով դպրոցի համար գրադարան բացել և վերջը օրիորդաց դպրոցի համար (եթէ չեմ սխալվում) մի շինութիւն է շինել, որ 7000 ր. փող արժէ: Եւ այդ բոլորը այն պատճառով, որ հոգաբարձութիւնը սիրով է վերաբերվել դէպի նրանց: Երևանի ուսուցչական խմբի մէջ էլ կան այդ ուսուցիչներից, որոնք արձակվել են: Եթէ հոգաբարձութիւնը խմբի հետ համերաշխ գործէր, մթթէ այդ խումբը տասնեակ աղբիւրներից արդիւնք չէր բերի, որից այսօր ոչ մի կօպէկ չունի ստացած հոգաբարձութիւնը:

Մեր ասելիքը թող չերկարի. այդ արդէն ակսիօմա է, որ համերաշխութեան տուած արդիւնքը ակներև է, միայն հոգաբարձութիւնը ուսումնարանի շահը աչքի առաջ ունենալով, պէտք է պահէր լաւ ոյժերը, որոնց կարող էր տալ ստորին դասարանների դասերը, մի և նոյն ժամանակ բարձր դասարանները յանձնելով բարձրագոյն կրթութիւն ստացած անձանց: Սրանով թէ գրկած չէր լինի մի քանի պիտանի ուսուցիչներին և տասը 30 ռուբլու փոխարէն, որ կը վճարէր նրանց, 50 ր. չէր տայ բարձր կրթութիւն ստացածներին և միւս կողմից էլ մի տեսակ վարձատրած կը լինէր 10—25 և 34 տարի ուսուցչութիւն անողներին:

Որովհետև թեմական ս. առաջնորդը հիւանդութեան պատճառով չէր կարողացել մասնակցել հոգաբարձութեան այդ ժողովին և այդ որոշումները հակառակ են եղել նորա կամքին, դրա համար էլ այդ ընտրութեան հաստատելը կասկածելի է: Մենք դարձեալ կը դառնանք այդ հարցին, բայց ցանկալի էր, որ հոգաբարձութիւնը ուղղէր իր այդ սխալը:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Պարիզ, օգոստոսի 10-ին

Այժմ ամբողջ Եւրոպան զբաղված է կանանց հարցով: Անգլիայում օրակարգ վիճաբանութիւնների առարկայ դարձել է կանանց բարձր պաշտօններ ստանձնելը: Հիւսիսային Ամերիկայում արդէն կանայք նախագահում են հասարակայ ընկերութիւններին, այն ինչ մեր հայրենի Կովկասում կինը դեռ ևս ճնշված է հարեմական ստրկութեան տակ:

Դուք, «Մշակի» պ. խմբագիր, ստացած լինելով եւրոպական բարձրագոյն կրթութիւն, և առաջնորդվելով համամարդկային գաղափարներով, ձեր գրական գործունէութեան 25 տարվայ ընթացքում աշխատել էք հայ կնոջը ևս ազատել իր նեղ շրջանից, որը այժմ ազատման ճանապարհի վրա է կանգնած. ուստի ևս, իբրև հայ օրիորդ, չեմ կարող չը շտապել շնորհաւորելու ձեր յօբելեանը և այն յաղթանակը, որ դուք տարաք նրա առիթով:

Օրիորդ Ն. Մարկոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Անցեալ տարի մամուլի միջոցով յայտարարվեց Արշակ Թումանեանի «Արբեցող և տաք սէր» վէպի լոյս տեսնելու մասին, սակայն հեղինակը հանդիպելով արգելքների, անզօր եղաւ իր այդ խոստումը կատարելու և գիրքը մինչև այսօր մնաց առանց տպագրվելու: Յայտարարում ենք, որ այդ գիրքը արդէն յանձնված է տպագրութեան և անշուշտ լոյս կը տեսնի սեպտեմբեր ամսի վերջերում: Նոյն հեղինակի «Ճակատի գրուածքը չի ջնջվի» գիրքը շուտով կը ստացվի և կուղարկվի բաժանորդներին»:

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Տեղիս դաւառապետը փոխվում է: Թէ ով կը լինի նոր դաւառապետը,—դեռ ևս յայտնի չէ: Շատ ցանկալի կը լինէր, որ նշանակվէր մեր նախկին դաւառապետ պ. Գանդելի (և ոչ թէ Կանչելի, ինչպէս ձեր լրագիրը սխալմամբ տպել էր): Դաւառապետ Գանդելիին

միութիւններից շատերին խորթ չէր կրօնական նպատակը: Այլապէս չէր կարող լինել միջին դարերում, երբ կրօնական զգացմունքը անսահման կերպով զարգացած էր, մինչև անգամ անտեսական կեանքը ազատ չէր կրօնի ազդեցութիւնից: Ուստի զարմանալի չէ, որ արհեստաւորների ցեխական միութիւնները մինչև անգամ XVIII դարում իրանց պատրօնների ոտներին միշտ չքեղութեամբ պատարագ էին մատուցանել տալիս:

III

Գիլդականների մի շարք այն կարծիքի էին, թէ արհեստաւորական միութիւնները—ցեխերը հռոմայեցիների քաղաքակրթութեան գործն է և Հռոմը այդ հաստատութիւնները, եթէ կարելի է այսպէս ասել, կտակեց եւրոպական միջնադարեան ազգերին: Այս կարծիքը նոր չէ և դեռ XVII-դ դարում [1]) պաշտպան գտաւ Հեննեցիուսի և Բէյերի կողմից. այս դարում նոյն կարծիքի էին Էյխհօրն, Գաուպ և մասամբ Արնօլդ:

Հռոմայեցիների քաղաքակրթութիւնը, ինչպէս յայտնի է, մեծ ազդեցութիւն ունեցաւ միջնադարեան ազգերի և նրանց քաղաքական ինքնավարութեան վրա. զարմանալի բան չէ, եթէ այս կամ այն արհեստը անցնելով գերմանական ցեղերին, մի և նոյն ժամանակ ներգործեց արհեստաւորների դասակարգի ներքին կազմակերպութեան վրա: Բայց միւս տեսակէտից այս ենթադրութիւնը չէ կարող ամենաճիշդ համարվել, քանի որ Գուստավ Շմոլլէր [2]) ապացուցեց, թէ շատ արհեստներ ի բնէ անտի յայտնի էին գերմանական ցեղերին:

Արհեստաւոր դասակարգի կազմակերպութիւնը զարգանում է դարերի [3]) ընթացքում: Եթէ մենք դիմենք հին Հռոմին, կարող ենք նկատել, թէ վաճառական և արհեստաւոր դասակարգը դեռ հին թագաւորների ժամանակ ունէին որոշ կազմակերպութիւն, ներքին ինքնավարութիւն և վարչութիւն: Արհեստաւոր դասակարգի միութիւնները կամ, ինչպէս հռոմայեցիք էին անուանում, կօլլէգիաները, ունէին կառավարիչ պաշտօնեաներ [1]), ժողովներ, ուր վճռվում էին կօլլեգիային վերաբերեալ բոլոր հարցերը, ունէին իրանց դանձը, իրանց առանձին տօները յանուն արհեստի հովանաւորիչ աստուծոյ: Առաջ, դեռ 1843 թվին Մոմզէն և վերջին ժամանակ Իւլիան Կուլակօվսկի ապացուցեցին, թէ այդ տեսակ կօլլէգիաները կամաց-կամաց տարածվում էին հին Հռոմում. նրանք ունէին զանազան նպատակներ—թէ կրօնական և բարոյական և թէ աշխարհական: Կային կօլլէգիաներ ձկնորսների, առանձին կօլլէգիա մանրավաճառների, արծաթագործների, վաճառականների և այլն: Կազմվում էին կօլլէգիաներ բուն կրօնական նպատակով, օրինակ, անդամների հոգու փոխադարձ փրկութեան համար. այսինքն ամեն անդամի մահից յետոյ կօլլէգիան մատուցանում էր պատարագ, կատարում էր հոգեհանգիստ, հոգս էր տանում թաղման ծախսերի մասին և այլն: Բոլոր կօլլէգիաները, ըստ հնոյն, ունէին ներքին ինքնավարութեան իրաւունք,—այն է իրանց վարչութիւնը, դատաստանը և դատաւորները: Ամեն մի կօլլէգիա ունէր դանձ, անշարժ գոյք և սեփականութիւն, որ և գործ էր դնվում անդամների օգնութեան համար, զանազան բարոյական և կրօնական նպատակներով: Հռոմայեցիների կառավարութիւնը, մինչև անգամ հանրապետութեան օրերում, զանազան տեսակ էր վերաբերվում այս հաստատութիւններին կամ ընկերութիւններին. երբեմն հալածում էր նրանց իբրև քաղաքական տեսակէտից վնասակար հասարակութեան, երբեմն հաշտվելով նրանց գոյութեան հետ, միայն սահմանափակում էր նրանց իրաւունքները, երբեմն աշխատում էր բարոյացնել նրանց ներքին կազմակերպութիւնը ժամանակի և պետական ընդհանուր շահերի պահանջներին համեմատ: Ոչ մի արգելք, ոչ պետական կարգադրութիւն չէր կարողանում կօլլէգիական կազմակերպութեան և զարգացման առաջն առնել. նրանք զանազան տեսակներով և նպատակներով տարածվում էին ոչ թէ միայն Իտալիայում, այլ և Գալլիայում: Կօլլէգիաներ կազմվում էին բոլոր քաղաքներում և մինչև անգամ գիւղերում: Բանը նրանումն է, որ հռոմայեցոց ազնվականների (պատրիցիների) կալուածքները (latifundia) նման էին մեծ գիւղաքաղաքների, ուր ժողովուրդը պարապում էր ոչ թէ միայն գիւղատնտեսութեամբ, այլ և արհեստներով: Ընդհանրապէս կալուածքներում բնակեցրած արհեստաւորները պատկանում էին մասամբ ստրուկների և մասամբ ճորտերի դասակարգին: Ուստի նրանք իրանց կազմակերպութեամբ համարվում էին officium, այսինքն «պաշտօն», որովհետև արհեստը համարվում էր ստրուկների, կամ ճորտերի պարտաւորեցուցիչ պաշտօնը:

Հին ժամանակներում արհեստն ու վաճառականութիւնը համարվում էին մի տեսակ ստոր գործ, որը հռոմայեցի ազատ քաղաքացին արհամարհում էր և նրանով չէր կարող պարապել: Բայց քրիստոնէութիւնը, քարոզելով մարդկային հաւասարութիւն, ազատեց աշխատանքը ստոր դրութիւնից և բարձրացրեց նրա նշանակութիւնը մարդկանց աչքում: Այս է պատճառը, որ ազատ քաղաքացիները ևս սկսեցին պարապել արհեստներով: Ժամանակի ընթացքում կազմվում էին կօլլէգիաներ, ազատ քաղաքացիներից, որոնք իրանց նուիրում էին այս կամ այն արհեստին: Այս տեսակ միութիւնները շատ տարածված էին Գալլիայում. նրանք կառավարվում էին իրանց վրա նշանակած պաշտօնեաներով, որոնք կրում էին magister կամ վարպետ տիտղոսը: Երբ գալլիացիք ձուլվեցան ու խառնվեցան հռոմայեցիների հետ, նրանց քաղաքակրթութիւնն ու հասարակական կազմակերպութիւնը ընդունեցին ամբողջութեամբ: Վերջապէս գերմանացի ցեղերի արշաւանքները մտցրին գալլո-հռոմէական հասարակական կեանքի մէջ նոր սկզբունքներ: Միութեան հոգին ի բնէ անտի յատկանիշ էր գերմանական ցեղերին, ինչպէս և ամեն ազգին և ամեն հասարակութեան: Զանազան տարրերը, շփվելով միմեանց հետ, տուին հին միութիւններին նոր կազմակերպութիւն: Նրանց կազմակերպութեան վրա ներգործեցին, ինչպէս հռոմայեցոց քաղաքակրթութիւնը, այնպէս և գերմանացոց սովորութիւնները: Ծագեցին և գոյութիւն ստացան այն եղբայրական միութիւնները, որոնց մասին մենք վերևում յիշեցինք. խօսքը gildona, fraternitas—միութիւնների մասին է: Իսկ ինչ որ վերաբերում է առանձնապէս հռոմայեցոց արհեստաւորների և վաճառականների կօլլէգիաներին, նրանք ունէին բուն վարչական և պօլիցիական նշանակութիւն: Կառավարութիւնը թոյլ տալով նրանց գոյութիւնը, աշխատում էր յարմարեցնել նրանց կազմակերպութիւնը ընդհանուր պետական վարչական սիստեմային: Ուստի նրանց հիմքը կազմում էր ոչ թէ տնտեսական շահերը, որ միջնադարեան գերմանական ցեխերի կամ միութիւնների գլխաւոր նպատակն էր, այլ վարչական սիստեմը: Այս տեսակէտից մեծ զանազանութիւն կայ հռոմայեցոց կօլլէգիաների և գերմանական միջնադարեան ցեխերի մէջ [1]): Ուրեմն դժուար է ենթադրել, որ ցեխերը հռոմայեցոց կօլլէգիաների շարունակութիւնն են, թէև շատ կարելի է, որ գերմանական այս կամ այն քաղաքում ցեխերը նոյն կազմակերպութիւնն ունէին, ինչպէս և կօլլէգիաները:

(Կը շարունակվի)

---

[1]) Վիլհելմ Շոիդա, Zur Entstehung des deutschen Zunftwesens. Iena. 1877. p. 2—3.

[2]) Գուստավ Շմոլլէր. Die Strassburger Tuchen- und Weberzunft urkunden und darstellung, Strassburg, 1879 թ. p.p. 353—358.

[3]) Schmoller, p. 388—390.

[1]) E. Levasseur, Histoire des classes ouvrières en France. Paris, 1859 թ., T. I, p. 1—2.

[1]) Rodbertus. Hildebrand's jahrbuch, V, p. 301. (Zur Geschichte des Römischen Tributsteuer seit Augustus).

մինչև այսօր դեռ չեն մոռացել Շուշու հայերը, իրրև ամենազարհուրելի մարդուն։

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալ նկատողութիւնը. «Ձեր լրագրի 79-րդ համարում պ. Խ. Մ. իր «Ժողովրդական գրադարաններ» յօդուածում ասում է, որ Շուշու Բարեգործական ընկերութեան փոքրիկ գրադարան-ընթերցարանը մահամերձ դրութեան մէջ է և ժողովրդին գրքեր մատակարարելուց շատ հեռու է։ Մենք առաջին կարծիքի հետ համաձայն չենք. մեր գրադարանը ամենևին մահամերձ վիճակի մէջ չէ, բայց որ գրքերը բուն ժողովրդին գրքեր չէ մատակարարում,—այդ ուղիղ է։ Գրադարանից, շատ անչան բացառութեամբ, գրքեր վերցնողներ՝ ուսանողներ, կամ ուսուցիչներն են, իսկ ժողովուրդը, ի հարկէ, դժուար թէ կարող է օգտվել գրադարանից, քանի որ ամենաէժան գիրք վերցնելու ժամանակ պէտք է գրաւ դնել գրադարանում ամենաքիչը՝ մի ռուբլի։ Ամսավճարն էլ մեծ է, մեր կարծիքով»։

—

Մեզ հաղորդում են մի ուրախալի նորութիւն, այն է, որ վերջին ժամանակներս բաւական սկսել է տարածվել ընթերցանութիւնը վրացիների, մանաւանդ հասարակ դասակարգի մէջ։ Ժողովրդական ընթերցանութեան գրքեր վրացերէն լեզուով բաւական յաճախ են հրատարակվում, միայն ցանկալի է, որ ժողովրդական ընթերցանութեան գրքերի մէջ աւելի խիստ ընտրութիւն անէին վրացի գրագէտները և հրատարակիչները, քան թէ մինչև այժմ անում էին։

—

Գաւառական զանազան քաղաքներից, ինչպէս երևում է մեզ եկած տեղեկութիւններից, բաւական շատ օրիորդներ ձգտում ունեն Թիֆլիս գալ և մտնել մի որ և է արհեստագիտական դպրոց, ձեռագործութիւնը սովորելու համար։ Ցանկալի է, որ Թիֆլիսի արհեստագիտական դպրոցը հրատարակէր իր մանրամասն կանոնները և պրոգրամը, որպէս զի գաւառներում տեղեկութիւն ունենային, թէ ինչ է այդ դպրոցի ծրագիրը և ինչպէս պէտք է մտնել այնտեղ։

—

Մեզ գանգատվում են Երևանից, որ մինչև այժմ էլ թեմական դպրոցի տեսուչը չէ ընտրված։ Մի քանի թեկնածուներ կան այդ պաշտօնի համար, բայց թէ դրանցից ով կը լինի տեսուչը—այդ յայտնի չէ։ Միթէ դժուար է հոգաբարձութեանը հասկանալ, որ տեսչի ընտրութիւնը ուսումնական տարվանից մի փոքր առաջ պէտք է անել, որպէս զի նա էլ մանակցէր այն ուսուցչական խմբի կազմակերպութեանը, որի հետ նա պիտի գործի։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Այստեղից մօտ 30 վերստ հեռաւորութեան վրա, Աղդամի պօլիցիական բաժնի մօտ գտնվող՝ Խդրլու թուրք գիւղի մօտ օգոստոսի 17-ին պատահեց մի յանդուգն աւազակութիւն. երկու շուշեցի հայ ճանապարհորդներ, Ս. և Ա. ազգանունով, պօստով անցնելիս Խդրլու գիւղից կէս վերստ հեռաւորութեան վրա, նրանց վրա յարձակվեցին չորս թուրք զինաւորված աւազակներ, և սպառնալով սպանել՝ պահանջեցին ճանապարհորդներից նրանց ունեցածը. նրանք խլեցին ճանապարհորդների փողը, մօտ 300 ռուբլի, հագուստը, ժամացոյցը և արծաթէ զօլիները։ Կասկածում են, որ աւազակները հէնց նոյն Խդրլու գիւղից են։ Պօլիցիային յայտնված է և արդէն աւազակներին որոնում են։ Նոյն դէպքի մասին կողոպտվածները անմիջապէս հեռագրել տուին Շուշու գաւառապետին և Գանձակի նահանգապետին»։

—

Թիֆլիսի պետական գիմնազիաներում այս տարի էլ, ըստ սովորականին, նոյն երևոյթն է կրկնվում.—գիմնազիա մտնել ցանկացողների թիւը մի քանի անգամ աւելի է, քան թէ դասարանների մէջ եղած արձակ տեղերի թիւը։ Դրա հետևանքը այն է լինում, որ բազմաթիւ երեխաներ զրկվում են դպրոց մտնելուց։

—

Թիֆլիսի առաջին գիմնազիայի տեսուչ Դրբօգլով նշանակված է Թիֆլիսի երկրորդ գիմնազիայի դիրեկտօր։ Այժմ Թիֆլիսի առաջին գիմնազիայի դիրեկտօրն է պ. Մարկով, երկրորդ գիմնազիայինը՝ պ. Դրբօգլաւ, իսկ պրոգիմնազիայինը՝ պ. Մարտինովսկի։ Բէալական դպրոցի դիրեկտօրն է պ. Տիրիտին։

—

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Բարբարոսութիւն և սպանութիւններ յաճախ են պատահում մեր հարևան գիւղերում։ Դրան պարզ ապացոյց է այստեղի նորերումս պատահած սպանութիւնը, որին զոհ եղաւ Ցաթիև գիւղացի ուսուցիչ Տիգրան Տէր-Յակոբեանց. պարոնը աւարտել է իր ուսումը Գէորգեան ճեմարանում, վարել է ուսուցչական պաշտօն մօտ երկու, երեք տարի Ցաթիևի հոգևոր ուսումնարանում, իսկ վերջին տարիներս Բագուի Մարդասիրական ընկերութեան ուսումնարանում։ Սպանութեան դէպքը պատահում է Հալիձոր գիւղում։ Ցանցաւորը նոյն գիւղացի է և սպանելուց յետոյ ինքն անձամբ ներկայանալով գաւառապետին, յայտնել է թէ ես եմ սպանել։ Նրան խկոյն բանտարկեցին. եղելութեան բուն պատճառն առ այժմ յայտնի չէ. այժմեանից քննութիւն է սկսվել և ժամանակով երևի կը բացվի ամեն բան։ Սպանվածը եկել էր հայրենիք և շուտով պէտք էր դնար Բագու իր պաշտօնը ստանձնելու. նա երեք տեղից էր վերք ստացել՝ մէկը ոտից, իսկ երկուսը աջ և ձախ կողքերին»։

—

Հասարակութիւնը սկսել է արդէն ամարանոցներից իջնել քաղաքը—բայց Թիֆլիսում վերջին օրերս սկսել է բաւական զգալի շոգ անել։ Տաղակալի չէ արդեօք կրկնել այն էլ հաղար անգամ կրկնածը՝ թէ հարկաւոր է ջրել քաղաքի թողոտ և կեղտոտ փողոցները։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Պ. Յովհաննէս Մատեսի-Գրիգորեան Խունունց իր ծախսով 2,500 ռ. մսխելով, Ղազանչեցոց գեղեցկաշէն եկեղեցու շուրջը բաւական լայն տարածութեամբ սրբատաշ քարից սալայատակ է արել, վարպետներին և մշակներին էլ բացի իրանց վարձատրութիւնից մինչև գործի վերջանալը ամեն օր ճաշ է տուել։ Ցանկալի է, որ այդ եկեղեցու հարուստ ծխականներից մէկն էլ իր ծախսով կառուցանէր այդ հոյակապ շինութեան կամուրջիկէն։

—

Մեզ թղթակիցը ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ հաղորդում է մեզ, որ այդ քաղաքում սկսել են կոտորել փողոցային շներին թոյնի միջոցով։ Բայց թղթակիցը անհրաժեշտ է համարում զգուշացնել տեղական ոստիկանութեան և հրաւիրել նրա ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ թունաւորված շներից շատերը ընկնում են գետակի մէջ, որից բնակիչները ջուր են խմում և այսպիսով կարող են թունաւորել ջուրը։ Ինքն ժողովուրդն էլ այն ասիճան ագէտ է, որ թունաւորված շների լեշերը շատ անգամ դցում է գետակի մէջ։

—

Մեզ գրում են հետևեալը. «Յուլիս ամսի վերջերում վախճանվեց Ղազախ գաւառի Ղազախ նորաշէն քաղաքի հարուստ, պ. Մակի Զաղէթեան, որը յայտնի էր իր բարեգործութիւններով։ Հանգուցեալի որդի Ալէքսանդրը նմանապէս շարունակում է ընթանալ իր հօր շաւղով և արդէն մի քանի նուիրատուութիւններ արաւ իր հանգուցեալ հօր յիշատակին»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են հետևեալը. «Մեր քաղաքի մանրաբաղ ասված դասակարգի չարութիւնները հասնում են վերին աստիճանի. այդ կինտօները գնում են ամեն առաւօտ, կանգնում գիւղերից դէպի քաղաքը տանող ճանապարհների վրա, և զանազան կենսական արդիւնքներ բերող գիւղացիներից գրեթէ բոնի և շատ էժան գնով առնում են ամեն տեսակ մթերքներ՝ ալիւր, իւղ, միրգ և այլն,—և ապա նոյն մթերքները ծախում են քաղաքացիների վրա երկու գնով։ Այսպիսով հարստահարվում է արդիւնաբերող գիւղացին, հարստահարվում է և սպառող քաղաքացին, իսկ շահվում է մէջտեղ մտնող հարստահարող կինտօ—չարչին։ Այդ անզուսպ մարդկանց վրա պէտք է խիստ և օրինական հսկողութիւն հաստատել, պէտք է, որ ոստիկանութիւնը նրանց վրա հսկէ և պատժէ նրանց, այլապէս մեր գիւղական արդիւնաբերողը, առանց այն էլ զրկված չինականը՝ անխնայ կերպով կը հարստահարվի միշտ և երբէք չի աղատվի այդ հարստահարութիւնից»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են. «Այստեղ շատ անգամ խօսվել է ծխական հայոց դպրոցի դրամագլխով հասարակական բաղնիս շինելու հարցի մասին։ Մտադրութիւնը գովելի է, նախ որպէս օգտաւէտ, նոյն իսկ անհրաժեշտ առողջական հաստատութիւն, և երկրորդ՝ որպէս ծխական դպրոցի հիմնաւոր եկամուտ բերող հաստատութիւն։ Փոխանակ դպրոցի դրամագլուխը զանազան անձանց տոկոսով տալու, աւելի լաւ է նրանով հասարակաց բաղնիս կառուցանել. նա կը բերի իր որոշ և հաստատ տոկոսները և մի և նոյն ժամանակ կը նպաստէ ժողովրդի մէջ մաքրասիրութեան սովորութեան արմատացնելուն։ Նոր-Բայազետը մինչև օրս երբէք չէ ունեցել որ և է բաղնիս և սրանով կարելի է չափել մեր քաղաքի բնակիչների մաքրասիրութեան աստիճանը։ Պէտք է ցանկանալ, որ բաղնիսը կառուցվի քաղաքիս ամենայարմար տեղերից միում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Մայրաքաղաքի «Нов. Время» լրագրի թղթակիցը գրում է Պարսկաստանի Մէշխէդ քաղաքից հետևեալը.

«Առհասարակ թէ տեղական բնակիչների համար, և թէ մանաւանդ ռուսների համար մեծ անյարմարութիւններ է ներկայացնում այն հանգամանքը, որ այստեղի հեռագրատունը անգլիացիների ձեռքումն է գտնվում։ Մէշխէդից ոչ մի հեռագիր չէ կարելի ուղարկել կամ ստանալ այստեղ, մինչև որ անգլիական հիւպատոսին յայտնի չը լինի։ Շատ հեռագիրներ մի քանի օրով բռնվում են այստեղ և նրանց բռնանդակութիւնը հիւպատոսը հաղորդում է Թեհրանի անգլիական դեսպանին։ Հեռագրատան բոլոր ծառայողներին հրամայված է հաղորդել հիւպատոսին հեռագիրների մէջ կարդացած բոլոր նորութիւնները, մանաւանդ քաղաքականութեան վերաբերեալ հեռագիրների բռնանդակութիւնը, մինչև անգամ ծածկագիր հեռագիրները մի քանի օր պահվում են կայարանում և չեն ուղարկվում, մինչև որ հիւպատոսը չը կարդայ։ Շահից Խորասանի կառավարչին ուղարկած և Խորասանի կառավարչի շահին ուղարկած հեռագիրները արտագրվում են և Թեհրան են ուղարկվում դեսպանին։ Հեռագրական գծերը չափազանց անվոյթ են պահվում այստեղ։ Հեռագիրը մի քանի օրով չէ բռնում։

«Որովհետև վերջին ժամանակներս Անգլիան շատ մեծացնում է իր հեծելազօրքի թիւը Հնդկաստանում, նորերս Խորասան և հարևան գաւառներն եկան հնդկացիներ ձիեր գնելու համար։ Միմիայն Մէշխէդում նրանք 250 ձիեր գնեցին։ Գնին չէն նայում նրանք, և քիչ թէ շատ լաւ ձիաների համար լաւ փող են տալիս»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսի ռուսաց դեսպանի միջնորդութեան շնորհով թոյլատրութիւն ստացվեց Կ. Պոլսի ռուս դեսպանութեան կից հիմնել ռուսաց դպրոց։ Դպրոցի նպատակն է ռուսներին հաւատակից և ազգակից տեղական ազգաբնակութեան մէջ ռուսաց լեզուի գիտութիւնը տարածել և աւելի մօտ ծանօթացնել մեր հայրենիքի հետ, և մի և նոյն ժամանակ հնարաւորութիւն տալ երիտասարդութեանը կրթվել ուղղափառ հոգով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ստատիստիական շատ հետաքրքիր տեղեկութիւններ են հաղորդում անգլիական լրագրները Լօնդօնի մասին։ Օրինակ, այնտեղ գտնվում են՝ 48 կամուրջներ Տէմզայի վրա, 76 թատրոններ, պօստային և հեռագրական 2,200 բաժանմունքներ 15,000 ծառայողներով, 547,410 տներ, 1,450 տաճարներ, 2,100 հիւանդանոցներ և բարեգործական այլ հիմնարկութիւններ, 7,600 գարեջրատներ, 1800 սրճարաններ, 3,100 հացաբաններ և 326,000 արական և իգական սեռին պատկանող ծառաներ։ Լօնդօնում իւրաքանչիւր օր ուտվում է՝ 2,200,000 պարկ ալիւր, 260,000 հատ խոզ, 450,000 տաւար, 1,600,000 հորթ, 8,500,000 մանր թռչուններ, և 220,000,000 ձկներ։ Լօնդօնում շօտլանդացիներ աւելի կան, քան Էդինբուրգում, իրլանդացիներ աւելի կան, քան Դուբլինում, կաթոլիկներ աւելի կան, քան Հռոմում, և հրէաներ աւելի կան, քան ամբողջ Պալեստինում։ Լօնդօնում 19,000 կառապաններ կան և 1,500 օմնիբուսներ։ Լօնդօնի աղգաբնակութիւնը 1666 թվին բաղկացած էր միայն 40,000 հոգուց, 1800 թվին—900,000 հոգուց, իսկ ներկայ տարին 4,425,000 հոգուց, իսկ 1900 թվին, շատ հաւանական է, որ 5000,000-ից աւելի կը լինի։ Լօնդօնի բնակիչները իւրաքանչիւր տարի ծախսում են մօտաւորապէս 4 միլիարդ ֆրանկ։

*
* *

Գերմանական լրագիրներից մէկը գրում է հետևեալը. «Զարմանալի է, թէ որպիսի մեծ դեր է խաղում 3 թուանշանը իշխան Բիսմարկի ամբողջ կեանքում։ Նրա ընտանեկան զինանշանի մէջ «in trinitate robur» ասացուածի հետ միասին գտնվում են կաղնեայ երեք տերևներ. ծաղրական թերթերում նրան միշտ երեք հատ մազով են նկարում. նա երեք որդի ունի՝ Հէրբերտ, Վիլհելմ և Մարիա. նա երեք կալուածք ունի՝ Ֆրիդրիխսրուհէ, Վարցին և Շէնհաուզէն. նա երեք ֆակուլտէտների դոկտոր է. նա երեք պատերազմ վարեց, երեք անգամ խաղաղութեան դաշնագիր կապեց, երեք կայսրների տեսակցութիւնը գլուխ բերեց, և վերջապէս երեքպետեան դաշնակցութիւն կապեց։ Նա համաձայնութիւն է կայացրել քաղաքական երեք կուսակցութիւնների հետ՝ անդրալեռնականների, պահպանողականների և ազգային ազատամիտների հետ. նա ծառայեց երեք կայսրներին և իր ամբողջ կեանքի ընթացքում կռուում էր երեք գաղափարի համար՝ պրուսական, գերմանական և խաղաղութեան գաղափարի համար»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգոստոսի։ Գլխաւոր բանտային վարչութեան կառավարիչ Գալկին-Վրասկի ճանապարհ է ընկնում Կովկաս և Անդրկովկաս բանտերը շրջագայելու նպատակով։—Պրոֆէսոր Մէնդելէեվ վճռեց դադարեցնել դասախօսութիւնները համալսարանում և կը շարունակէ դասախօսել միայն հաղորդակցութեան ճանապարհների և լեռնային ինստիտուտներում։ Մէնդելէեվի տեղը կը բռնի համալսարանում Կոնովալով։ Համալսարանում դասախօսութիւնները կը սկսվեն սեպտեմբերի 3-ին։—Նախագծված է, որ գործարաններին կից դպրոցները հիմնվեն մի քանի հարևան հիմնարկութիւնների ընդհանուր հաշվով, նոյնպէս և որ բոլոր գործարաններում, որոնք 8 վերստով հեռու են գտնվում այն տեղից, ուր հիւանդանոց կայ, հիմնվեր հիւանդանոց դեղատան հետ միասին։

ԿԱԶԱՆ, 22 օգոստոսի։ Երէկ երեկոյեան այստեղ հասաւ «Владиміръ Мономахъ» շոգենաւով Ֆինանսների մինիստրը, դիրեկտոր Վիտէի ուղեկցութեամբ։ Նաւահանգիստում մինիստրին դիմաւորեցին նահանգապետը և քաղաքագլուխը, զանազան վարչութիւնների ներկայացուցիչների հետ միասին։ Այսօր, առաւօտեան 7 ժամին, մինիստրը աւելի քան 5 ժամ նայեց գիտական-արդիւնաբերական ցուցահանդէսը և նրա բաժինները. ապա մինիստրը ընդունեց այն նախաճաշիկը, որ առաջարկեցին նրան ազնուականների ժողովրանում, քաղաքային և բօրսային հասարակութիւնները, որի ժամանակ կազանին հետաքրքրող հարցի, այն է երկաթուղու հարցի մասին մինիստրը ասեց, որ հաւանօրէն մօտիկ ապագայում Կազանը երկաթուղու գծով կը միացվի երկաթուղային ընդհանուր ցանցի հետ։ Նախաճաշիկից յետոյ մինիստրը այցելեց Կրեստովնիկովների գործարանը, իսկ 5 ժամին 45 ռուբլին երեկոյեան մեկնեց Կազանից «Ցեսարևիչ Նիկոլայ» նաւով։

ՊԱՐԻԶ, 22 օգոստոսի։ Այստեղ ժամանեց Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի։ Ինժեներական մասի գեներալ-տեսչի օգնական գեներալ Զվերեվ երէկ ճանապարհ ընկաւ մի քանի ամրութիւններ վերաղիտելու համար։—Գեներալ Անենկով ուղեւորվեց Անդրկասպեան երկիրը։—«Новости» լրագիրը հաղորդում է, որ տեխնիական ընկերութեան մէջ նորերս մի ռուս մնայնագործի, Սէմէոն Կօրօլևի հնարած հեռաղարկ հրացանը փորձվեց։ Փորձը շատ լաւ հետևանքներ ունեցաւ։—«С. Пет. Вѣд.» լրագիրը լսել է, որ հրամայված է իշխանութիւններին քննել այն մեծ հրդեհների պատճառները, որոնք այժմ տեղի են ունենում գաւառներում։—Բացի անգլիացիներից, այժմ նորվեգացիներն էլ փորձում են ծովային առևտրական յարաբերութիւններ կապել Սիբիրի հիւսիսային ափի հետ, ուր նրանք նորերս ուղարկել են «Բիսկայ» մեծ նաւը ապրանքով։ Երէկ Խրիստիանիայում բացվեց միջազգային կօնգրէս՝ քննելու այն միջոցները, որոնցով կարելի է դիմադրել ոգելից ըմպելիքների չափազանց գործածութեան։

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Փոստային գնացքը ուղևորվում է

ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Բաթում . .	8 ժ.	40 ր.	առաւ.
ԲԱԹՈՒՄԻՑ գալիս է Թիֆլիս .	11 »	8 »	երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Բագու . . .	12 »	8 »	երեկ.
ԲԱԳՈՒԻՑ գալիս է Թիֆլիս . .	7 »	40 »	առաւ.

Ապեռաքա-ճանապարհորդական գնացքը

ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Բաթում . .	3 ժ.	10 ր.	ցերեկ.
ԲԱԹՈՒՄԻՑ գալիս է Թիֆլիս. .	8 »	» »	առաւ.
ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Գանձակ . .	9 »	45 »	առաւ.
ԳԱՆՁԱԿԻՑ գալիս է Թիֆլիս .	8 »	20 »	եկեկ.

—

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳԵՆԱՒԵՐ

Ամառնային երթևեկութիւն

ԵՐԵՔՇԱԲԹԻ օրերը, երեկոյեան 4 ժամին, շոգենաւը Բաթումից ուղևորվում է Օդէսա՝ Սուխումի և Նովոռոսիյսկի վրայով։

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը, երեկոյեան 4 ժամին, ուղղակի ընթացքով, Նովոռոսիյսկի վրայով։

ՇԱԲԱԹ օրերը, 8 ժամին երեկոյեան, շրջական ընթացքով, բոլոր նաւահանգիստների վրայով։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ օրերը, 7 ժամին երեկոյեան, արտաահմանեան ընթացքով դէպի Կ. Պոլիս։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԿԱՏԵՐԻՆԷ ՍՏԵՓԱՆԵԱՆ, ԱՆՆԱ ԱՒԵՏԻՍԵԱՆ, ԵԿԱՏԵՐԻՆԷ ՇԽԵԱՆ, ՍՕՓԻԱ ՏՈՒԼԱՑԵԱՆ, ՎԱՍԻԼ ԵՒ ՌԱՄԱՆ ԵԱՐԱԼԵԱՆՆԵՐԸ *ցաւօք սրտի յայտնում են՝ առաջինը իր ամուսնու, իսկ վերջինները իւրեանց եղբօր՝* ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳԷՈՐԳԵԱՆ ԵԱՐԱԼԵԱՆԻ *մահը և խնդրում են ազգականներին և բարեկամներին պատուելու հանդուցեալի յուղարկաւորութեան հանդէսը, որ տեղի է ունենալու ամսիս 26-ին, առաւօտեան ժամը 10-ին։ Հանդուցեալի դին դուրս կը տանեն իր սեպհական տանից, որ գտնվում է Աբասաբաթեան հրապարակի վրա, № 24, դէպի Մողնու սուրբ Գէորգ եկեղեցին։ Ամբիծք կը լինի շաբաթ օրը, ամսիս 25-ին, երեկոյեան ժամը 7-ին։*

1—1

ՄԻ ԸՆՏԱՆԻՔ *ընդունում է գիշերթիկ աշակերտներ մատչելի գներով։ Աշակերտների հետ կրկնութիւններ կանեն։ Նոյն տեղը կարելի է ֆրանսերէնի և գերմաներէնի դասեր վերցնել։ Հասցէն.* Авчалская площадь, домъ Исарлова, квартира Лункевича.

1—10

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ *որ իր ուսման ընթացքը աւարտել է Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցում, ցանկանում է լինել մի որ և իցէ արհեստաւորաց ուսումնարանում վարպետի օգնական. Հասցէն* Католическая улица, домъ № 23-й Григорію Малиньянцу.

ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՕՐԲԵԼ ՕՐԲԵԼԵԱՆՑԻ

(Բեհբութեան փողոց)

Ընդունվում են երթևեկ աշակերտներ և պատրաստվում պետական գիմնազիաների ու Ներսիսեան դպրոցի համար։

1—3

ՕՐԱՑՈՅՑՆԵՐ

1891 *Թ.*

լոյս կը տեսնեն հոկտեմբերից

1. Մոցի պատկերազարդ լիակատար օրացոյց գինը	15 կ.
2. Սեղանի մեծադիր	30 »
3. Կանանց համար յատկապէս	40 »
4. Պատի հատուածական լիակատար . .	50 »
5. Գրպանի փոքրադիր, համառօտ . . .	5 »

ՄԻՆՉԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ը

Բոլոր 5 հրատարակութիւններին միասին բաժանորդ գրվողը ճանապարհածախս չը պէտք է վճարի։ «Աղբիւրի» և «Ցարազի» բաժանորդները վճարում են ճանապարհածախով 1—20 կ.

Դիմել «Աղբիւրի» վաճառանոցին. Тифлисъ. «Агбюръ».

1—15

ԳԵՂԱԳԻՐ ԱԼԲՕՄ

Մի գեղեցիկ գործ և ամեն հայ ընտանիքի հիւրասենեակի զարդ

լոյս կը տեսնի կարճ ժամանակում

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻ

բաժանորդագինը 1—50 կ., *ալբոմը լոյս տեսնելուց* 2 ր., *փառակազմ* 3 ր.

Բաժանորդագրութիւնը ընդունում է «Աղբիւրի» և «Ցարազի» խմբագրութիւնը։ 1—10

ԳԱԼՈՒՍՏ ԱԼՈՅԵԱՆՑԻ

„ԿՈՎԿԱՍ“

Զինագործարանը յանձնարարութեամբ պատրաստում է որսորդական ամեն կարգի նորաձև հրացաններ, ինչպէս են կենտրոնահար (центральнаго боя) *և լցնովի* (шомпольное) *հրացաններ՝ ուղղակ և կամ պտուտակաւոր փողերով, նմանապէս Մոնտէ-Կրիստո կոչված կարաբիններ։*

Զինագործարանը նորոգում է ամեն տեսակ ատրճանակներ, հրացաններ և ձեւափոխում է հրացանների սիստեմները։

Զինագործարանը ունի առանձին բաժանմունք երկաթա-փականագործական և ճախարակա-մեքենագործական աշխատութիւնների համար. և պահում է նոյնպէս մասնագէտ վարպետ կարի մեքենաների վերանորոգութեան համար։

Դիմել. ТИФЛИСЪ, Солдатскій базаръ, оружейная мастерская, „Кавказъ“

Галусту Алояныц.

5—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻ *երկդասեան տղայոց դպրոցի համար հարկաւոր է* **ԱՒԱԳՈՒՍՈՒՅԻՉ**։ *Ցանկալի է, որ նա ճեմարանական կամ պետական միջնակարգ դպրոցի ուսումնաւարտ լինէր, որպէս զի յանձն առնէ աւանդել* ՀԱՅՈՑ *և* ՌՈՒՍԱՑ *լեզուները, շաբաթական* 18—24 *դաս, առաջին կոպարով։ Կունենայ ճանապարհածախս։ Պայմանների մասին դիմել.* АЛЕКСАНДРОПОЛЬ, Священнику Месропу Геонджянцу.

3—3

Այս օրերս լոյս տեսաւ

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Երկրորդ տպագրութեամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՌՔԸ

կոչված հայոց թագաւորների պատկերների ժողովածուն։

Գինն է 1 *ռուբլի։ Դիմել* ՄՕՍԿՎԱ, *հայոց եկեղեցի,* ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՆՕՍՕՎԻՆ, *իսկ տօնավաճառի ժամանակ՝* ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ։

9—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ *դէպի* ԲԱԹՈՒՄ, *չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, հինգշաբթի* 4/16 *ապրիլից սկսած*

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս, հինգշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, հինգշաբթի 26 *ապրիլից (մայիսի 8-ից) սկսած։*

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Հինգշաբթի,	16/28 *օգոստոսի,*	*շոգենաւ*	ԱՆԱՏՕԼԻԱ	*նաւապետ* ԳԱԲՐԻԷԼ
—	30 *օգոստոսի* (11 *սեպտեմբերի*)	—	ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԵԼ
—	13/25 *սեպտեմբերի*	—	ՄԻՆԳՐԷԼԻԱ	— ԺԻԲՈՒԷՆ
—	27 *սեպտեմբերի* (9 *հոկտեմբերի*)	—	ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱԲՐԻԷԼ.

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, իսկ* ԹԻՖԼԻՍՈՒՄ *պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, նախկին գեներալ Տէր-Աստուածատանը։*

5—10 (*Ե. ԵՒ Շ.*)



ՄԻԱՅՆ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՊ

բժշկական դէպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 *կոպէկով*

Դեղագործական ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում։

21—52 (Շ.)

ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆՑԻ

ԳՏՆՎՈՒՄ Է ՍՕԼՕԼԱԿ, ՎԵԼԻԱՄԻՆՕՎՍԿԱՅԱ ՓՈՂ., ՏՈՒՆ ԳԷՈՐԳՕՎԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 20-ից ՍԿՍԱԾ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ *գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադէտսկի կօրպուսի և Ներսիսեան ուսումնարանի համար։*

Ուսումնարանում, բացի զանազան գիմնազիական առարկաներից, աւանդվում են այլ և այլ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լեզուներ։

Ցանկացողները կարող են ԴԱՇՆԱԿԻ (*բոյալ*) *վրա ածել սովորել. դրա համար պանսիօնում կայ առանձին մասնագէտ ուսուցիչ։*

Ուսումնարանում ընդունվում են ԵՐԹԵԻԵԿՆԵՐ, ԿԻՍԱԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐ *և* ԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐ։

Հասցէն. Тифлисъ, Вельяминовская улица, домъ Геворкова.

3—3

Մի երիտասարդ, որ քաջ գիտէ ֆրանսերէն, բնակութիւն հաստատելով Թիֆլիսում, ցանկանում է ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ *տալ, շատ* ՄԱՏՉԵԼԻ ԳՆՈՎ։ *Ցանկացողները կարող են դիմել Սալի-օղլու ծխախոտի գործարանը (Բեբուտովսկայա փողոց) և հարցնել* ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԻՒՐՋԵԱՆԻՑ։

4—10

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ աշակերտուհիների ընդունելութիւնը ս.* Նշան *եկեղեցական—ծխական օրիորդաց միդասեան դպրոցում սկսվում է օգոստոսի* 21-*ից և կտևի մինչև սեպտեմբերի* 1-*ը։*

3—3

Ե. ԿԱՐԳԻ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, *որ աւարտել է ուսուցչական ինստիտուտը, ցանկանում պաշտօն ունենալ հայոց դպրոցներում։ Կը պարապի ռուսաց լեզուից։ Համաձայն ստանձնել և աւագ-ուսուցչի պաշտօն։ Ցանկացողները հասցէն կարող են իմանալ* „Աղբիւրի“ *խմբագրատանը, ուր և կարող են դիմել օտար քաղաքներից։*

3—5

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ նրա խնամակալութեան ներքոյ գտնված „կար և ձեռագործի դպրոցի“ մէջ աշակերտուհիների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի* 21-*ին։ Դպրոց մտնել ցանկացողները պէտք է դիմեն դպրոցի կառավարչին իրանց խնդրագրով ներկայացնելով ծննդեան և ծաղկի պատուաստման վկայականների հետ և հայոց եկեղեցական—ծխական դպրոցի աւարտման վկայագիրը։*

Դպրոցը գտնվում է Սօլօլակում, Սերգէևսկի *փողոցում, տուն* Շաղինեանցի։

3—3

Գլխաւոր պատհեստը դարձնում է թիֆլիսում և բազում բարձրագոյն հաստատ-

ված դեղատների ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մասնաճիւղերում։

2—50 (*Շ.*)

Дозволено цензурою, Тифлисъ 24 Августа 1890 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.